Արձանագրություն 3
«Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ի կարիքների համար «ՍՄՆՀԴ-ԳՀԱՊՁԲ -17/4-2» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 12.10.2017թ. ժամը 12:30-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ
Ա. Ալավերդյան – «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ի գլխավոր հաշվապահ
Անդամներ
Մ. Ավագյան- Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ի վիճակագիր
Ի. Ներսեսյան - Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ի բուժ. մատենագիր
Ք. Մելքումյան - Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ի հերթապահ բուժքույր
Ա. Պետրոսյան - Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ի գործավար

*Քարտուղար-գնումների համակարգող*

Ռ. Մկրտումյան - Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ի տնտեսագետ

1. <u>ՀՀ Կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին</u>

1. Ընդունել ի գիտություն, որ

1.1 1.1 ՀՀ Կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել ՀՀ կառավարության պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերավերյալ:
ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:
1.2 «ՍՄՆՀԴ-ԳՀԱՊՁԲ -17/4-2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչված «Ալֆա-Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ն, «Արֆարմացիա» ՓԲԸ-ն և «Նատալի ֆարմ» ՍՊԸ -ի կողմից էլեկտրոնային փոստի միջոցով հրավերով սահմանված ժամկետում ներկայացրել է որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը.

-Հանձնաժողովի քարտուղարը ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև գնահատման թերթիկների երկուական օրինակները տրամադրել է ընթացակարգի գնահատող հանձնաժողովին:
-Հանձնաժողովի անդամները գնահատման թերթիկների մեկական օրինակները ներկայացրել են հանձնաժողովի քարտուղարին

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

2. Գնանշման հարցման ընթաղակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացրած գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել «ՍՄՆՀԴ-ԳՀԱՊՁԲ -17/4-2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիներին հայտի գնահատման արդյունքները.

| Մասնակցի անվանումը | Հայտի գնահատականը |
|---|---|
| «Ալֆա-ֆարմ Իմպորտ» ՓԲԸ | բավարար |
| «Արֆարմացիա» ՓԲԸ | բավարար |
| «Նատալի ֆարմ» ՍՊԸ | բավարար |

-Մասնակիցների կողմից ներկայացված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. հաստատել «ՍՄՆՀԴ-ԳՀԱՊՁԲ -17/4-2» գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ «ՍՄՆՀԴ-ԳՀԱՊՁԲ -17/4-2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից է հայտարարել «Ալֆա-ֆարմ Իմպորտ» ՓԲԸ –ն՝10-րդ, 15-րդ և 22-րդ չափաբաժինների մասով, «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ն՝ 1-9-րդ, 12-14-րդ, 17-21-րդ և 23-րդ չափաբաժինների մասով, «Արֆարմացիա» ՓԲԸ-ն՝ 20-րդ չափաբաժնի մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետը՝
- «Ալֆա-ֆարմ Իմպորտ» ՓԲԸ -ին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել 73260 (յոթանասուներեք հազար երկու հարյուր վաթսուն) ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով:
- «Արֆարմացիա» ՓԲԸ-ին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել 137200 (Մեկ հարյուր երեսունյոթ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով:
- «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել 214013,74 (Երկու հարյուր տասնչորս հազար տասներեք դրամ յոթանասուչորս լումա) ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով:

4.2 հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը, անգործության ժամկետ 5 օրացուցային օր է:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

5. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին</u>

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11:00-ին, «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ի շենքում, հասցե՝ ք.Կապան, Բաղաբերդ 48:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

| | | |
|---|---|---|
| Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ | _____ | Ա. Ալավերդյան |
| հանձնաժողովի անդամներ՝ | _____ | Ս. Ավագյան |
| | _____ | Ի. Ներսեսյան |
| | _____ | Ք. Մելքումյան |
| | _____ | Ա. Պետրոսյան |
| Գնումները համակարգող՝ | _____ | Ռ.Մկրտումյան |